ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 190-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 5-րդ մասի 1-ին պարբերությամբ և նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալի գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2016 թվականի հոկտեմբերի 12-ին N 12610 թվագրմամբ)՝ **Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 12-ի «Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու մասին» N 190-Ա որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Ռ. ՍԱՆՈՅԱՆ

Վ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ռ.ԱՄԱՏՐՅԱՆ

Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Կատարող՝
Ա.Գրիգորյան

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 190-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ**

Որոշման ընդունումը պայմանավորված է Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի ործառույթների իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով հանձնաժողովի անհատական կազմի փոփոխության և համալրման անհրաժեշտությամբ:

**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 190-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 12-ի N 190-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» որոշման ընդունմամբ Գյումրի համայնքի 2017 թվականի բյուջեում էական փոփոխություններ՝ ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Գյումրի համայնքի ավագանու
**2017**թվականի ______________ «___»-ի
**N ______-Ա**որոշման

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
(նոր խմբագրությամբ)

Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի

**Հանձնաժողովի նախագահ՝**

1. Աշոտ Գրիգորյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետի,

**Հանձնաժողովի քարտուղար՝**

2. Թերեզա Գրիգորյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության բաժնի գործավար-մանկավարժ,

**Հանձնաժողովի անդամներ՝**

3. Էդուարդ Բաղրամյան – Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում՝ սոցիալական աջակցության Գյումրի-2 տարածքային բաժնի պետ,
4. Մանուկ Գորգինյան – ՀՀ Ոստիկանության Գյումրու քաղաքի Մուշի բաժնի անչափահասների գործերով բաժանմունքի պետ,
5. Գայանե Գալոյան – ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Գյումրի քաղաքի երեխաների սոցիալական հոգածության կենտրոն» ՊՈԱԿ-ի սոցիալական աշխատող,
6. Կարինե Կուրղինյան - «Վորլդ Վիժն ՄԲԿ» Գյումրիի գրասենյակի համակարգող,
7. Լիլիթ Բաղդասարյան – ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի առաջատար մասնագետ, հոգեբան: